Արձանագրություն N 3
«ԹՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» մարտ 2018թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Առուստամյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բաղալյանը
Գնահատող հանձնաժողովի անդամ Արմեն Տիրատությանը բացակայում էր հանձնաժողովի նիստից:

Ընդունել ի գիտություն, որ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ն, «Ինկրիպտ» ՍՊԸ-ն և «ՍԵԳ» ՍՊԸ-ն ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:
Գնահատող հանձնաժողովի կողմից կատարված գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

1. «ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ՝ Չափաբաժին 5-ով ներկայացված ՝ WiFi Router ASUS RT-AC58U սարքը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես՝ վերոնշյալ սարքի պաշտոնական կայքում նշված չէ, որ սարքը ունի՝ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող Wired Bridge, Wireless Bridge, Wireless Repeater հատկանիշները,
2. «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից Չափաբաժին 1-ով ներկայացված HP Pavilion 570 համակարգչի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ հարավերի տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ համակարգիչը օպերացիոն համակարգը պետք է լինի Windows 7 Pro 64 bit, իսկ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է Windows 7 Home 64 bit,
3. «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից Չափաբաժին 3-ով ներկայացված AOC I2475PXQU մակնիշի մոնիտորը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ առաջարկվող մոնիտորը պետք է ունենա 4 x USB3.0, իսկ մասնակիցը առաջարկել է՝ 3xUSB2.0+1xUSB 3.0+1xUSB3.0:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով «ՍԵԳ» ՍՊԸ-ին և «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել սույն թվականի Մարտի 7-ի ժամը 12:00-ն՝ Տիգրան Մեծ 4, 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 2, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Հ. Հովհաննիսյան

Անդամներ՝ _____ Մ. Առուստամյան

Քարտուղար՝ _____ Ա. Բաղայան